2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ *ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

Հայտի հաստատման ամսաթիվը՝ *ՄԱՐՏ 2023 ԹՎԱԿԱՆ*

1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում Արտաքին գործերի նախարարությունը պետք է իրականացնի.

Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում, որի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և պետական շահերի պաշտպանությունը: Ծրագրի թիրախն է՝ տարածաշրջանային խաղաղության և կայունության հաստատումը, գործընկերների հետ համագործակցության խթանումը և հարաբերությունների կարգավորումը, ԼՂ հիմնահարցի խաղաղ և համապարփակ կարգավորումը: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 16-ի հետ:

Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում, որի նպատակն է՝ միջազգային ասպարեզում ՀՀ շահերի պաշտպանությունը և դիրքորոշումների առաջ մղումը: Ծրագրի թիրախն է՝ երկկողմ և բազմակողմ միջազգային հարթակներում գործունեության ծավալումը և օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանության ապահովումը: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 17-ի հետ:

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ, որի նպատակն է՝ միջազգային կազմակերպություններում ներգրավման միջոցով ՀՀ առաջնահերթությունների սպասարկումը: Տվյալ ծրագրի թիրախն է՝ միջազգային կազմակերպություններում արտաքին քաղաքական, անվտանգային, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներին առնչվող ՀՀ հետաքրքրությունների առաջմղումը: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 17-ի հետ:

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում, որի նպատակն է՝ պետական կառավարման համակարգում արտաքին հարաբերությունների իրականացման արդյունավետության բարձրացումը: Տվյալ ծրագրի թիրախն է՝ դիվանագիտական ծառայության համալրումը նոր և որակյալ մասնագետներով, ՀՀ և օտարերկրյա դիվանագետների վերապատրաստում, պետական ծառայողների մասնագիտական կարողությունների բարելավումը: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 4-ի հետ:

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում, որի նպատակն է՝ արարողակարգային միջոցառումների պատշաճ կազմակերպումը: Տվյալ ծրագրի թիրախն է՝ արարողակարգային միջոցառումների և Պետական արարողակարգի ծառայությանը վերապահված այլ գործառույթների համապարփակ իրականացումը՝ համաձայն միջազգայնորեն ընդունված կանոնների: Այս բյուջետային ծրագիրն ապահովում է կապը ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված նպատակ 17-ի հետ:

2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակա ծախսային ուղղությունները և միջոցառումները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար (ըստ գերակայությունների նվազման)	Լուծման կամ կարգավորման ենթակա խնդիրները
1. Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում	Գործընկեր պետությունների հետ հարաբերությունների շարունակական զարգացում և ամրապնդում
1.1 Արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում	ՀՀ Կառավարության ծրագրի հիման վրա արտաքին գործերի բնագավառում քաղաքականության մշակում և իրականացում, դիվանագիտական ծառայության կազմակերպում և ղեկավարում, հյուպատոսական ծառայությունների մատուցում
1.2 ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում	Հայաստանում և արտերկրում հյուպատոսական ծառայությունների մատուցման տեխնիկական ապահովման նպատակով հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ

1.3 Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում	Արտաքին գործերի նախարարության աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում
2. Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում	Երկկողմ և բազմակողմ միջազգային հարաբերություններում ՀՀ մասնակցություն, դիրքորոշումների ներկայացում, օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց շահերի պաշտպանություն, տոկոս
2.1 Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում	Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական գործունեության միջոցով արտաքին գործերի բնագավառում ՀՀ Կառավարության քաղաքականության իրականացում, հյուպատոսական ծառայության մատուցում
2.2 ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում	ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանում գործընկեր երկրների համար նախատեսված մասնաշենքում հիմնանորոգման ծախսերի փոխհատուցում՝ Հայաստանին տրամադրված տարածքի մասնաբաժնի մասով
3. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	Միջազգային կազմակերպություններին անդամակցություն, ՀՀ շահերի առաջ մղում, արդյունավետ համագործակցություն՝ այդ թվում ծրագրերի մասով
3.1 Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ	Միջազգային կազմակերպությունների աշխատանքներին ՀՀ մասնակցության, Հայաստանում նրանց կողմից տարբեր ծրագրերի իրականացման ապահովում
3.2 ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում	Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գրասենյակի վարձակալության վճար
4. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	Բարելավել միջազգային հարաբերությունների ոլորտում ներգրավված պետական ծառայողների և դիվանագետների՝ այդ թվում օտարերկրյա, աշխատանքի արդյունավետությունը

4.1 Արտաքին հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	Արտաքին հարաբերությունների ոլորտում ներգրավված պետական ծառայողների աշխատանքի արդյունավետություն բարելավում
5. Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում	ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումների, ընթացակարգերի և ծիսակարգերի կազմակերպում և իրականացում, տոկոս

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորու-թյունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1061	11001	**Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում**	Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործում: Միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում, պաշտպանություն:	ՀՀ երկկողմ և բազմակողմ կապերի շրջանակը, ծավալն ու խորությունը	ՀՀ Սահմանադ-ություն, Հոդված 13, Հոդված 146 ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական

					ոլորտները, 5-րդ կետ Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագիր
1128	11001	**Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմա-կերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում**	Միջազգային հարաբերու-թյուններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում, պաշտպանություն: Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն, հյուպատոսական ծառայությունների մատուցում: ՀՀ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ	Դիվանագիտական ծառայության մարմինների թիվը օտարերկրյա պետություններում: Դիվանագիտական ծառայության մարմինների պահպանման ծախսերի ծավալը	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք, 10-րդ և 51-րդ հոդվածներ ՀՀ կառավարության 2021-

			դիվանագիտական պահպանում և զարգացում:		2026թթ. ծրագիր
	12001	**ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում**	ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրագործում:	Գրասենյակի ընտրություն Աշխատակիցների թվաքանակ	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետ
1118	12001	**Միջազգային կազմակերպություն-ներին ՀՀ անդամակցության վճարներ**	Սահմանված ժամկետներում միջազգային կազմակերպությունների անդամավճարների վճարում	Ըստ արտաքին քաղաքականության առաջնայնությունների՝ միջազգային կազմակերպությունների շրջանակի ընտրությունը	Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենք ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետի 4-րդ ենթակետ ՀՀ կառավարության 2021-

					2026թթ. ծրագիր
1050	11001	**Արտաքին հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում**	Դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասնագիտական վերապատրաստում. դիվանագիտական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար անձանց պատրաստում, այլ մասնագիտացված դասընթացներ և կրթական ծրագրեր	Դասընթացների մասնակիցների քանակը	«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 34.1 հոդված և 52-րդ հոդվածի 3-րդ մաս
1118	12002	**ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում**	Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում:	Տեղեկատվական կենտրոնի տարածքի ընտրություն, վարձակալության ծախսեր	Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ ՀՀ կառավարության 2021-2026թթ. Ծրագիր
1178	11001	**ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում**	Միասնական արարողակարգային գործելակերպի և ընթացակարգի ապահովում, արարողակարգային կանոնների միասնական կիրառում ՀՀ-ում և միջազգային հարաբերություններում:	Արարողակարգային միջոցառումների թիվը, ծախսերի ծավալը	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին ՀՀ օրենք, Հավելված, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 5-րդ կետ

					ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետ, 17-րդ ենթակետ Պետական արարողակարգի մասին ՀՀ օրենք:
1061	11002	**ՀՀ մուտքի արտոնագրեր, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում**	Հյուպատոսական գործունեության իրականացում:	Ձևաթղթերի միավորի տպագրական ծախսերի ծավալը	ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենք ՀՀ ԱԳՆ կանոնադրություն, 11-րդ կետ, 15-րդ ենթակետ
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1061	11008	**«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորում**	«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հինգերրոդ Գլոբալ ֆորումին մասնակցող հրավիրված հյուրերի քանակը	-	ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 1.1 կետ և ՀՀ կառավարության գործունեության 2021-2026թթ միջոցառումների 3.1 կետ

1061	31001	**Արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ապահովում**	Աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռք բերում	-	ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 6.7 բաժին
1061	31002	**Արտաքին գործերի նախարարության տրանսպորտային միջոցների բարելավում**	Աշխատանքները պատշաճ որակով կազմակերպելու նպատակով ավտոմեքենայի ձեռքբերում	-	ՀՀ կառավարության 17.02.2005թ. N 194-Ն որոշում
1178	31001	**Արարողակարգային ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում**	Արարողակարգային ծառայության աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում	-	ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի 6.7 բաժին
1178	31002	**Արարողակարգային ծառայության տրանսպորտային միջոցների բարելավում**	Աշխատանքները պատշաճ որակով կազմակերպելու նպատակով ավտոմեքենաների ձեռքբերում	-	ՀՀ կառավարության 17.02.2005թ. 194-Ն որոշում

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ոչ բյուջետային աղբյուրներից եկամուտներ չունի:

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության համար կիրառելի չէ:

6. ՄԻՋՈՒՂՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվող ծրագրեր/միջոցառումներ չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ներկայացված է Հավելված 8-ում :